Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20089

372
Ε-93

2010

22
-93

75

Ն.-ԶՈՒՂԱՅԻ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ,

Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

1910—1911 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՅ

ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻՑ

2002

70
Զ-ՏԵ

1911

ԶՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

372
Ե-93
370
Զ452-ՅԵ

ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ

Գ. ՔԱՆԱՆԵԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ
ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

եւ

Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶԻ
1910-1911 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՑ

1004
15997

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կարդացուած 1911 թ. յունիս 12 ին
Կենտր. դպրոցի դահլիճում
Դպրոցական Ակտին։

8486

Թէ որքան մեծ է դպրոցի կրթիչ դերը ժողովուրդների կեանքի մէջ, այդ ամենքիս յայտնի է։ Ամեն տեղ իւրաքանչիւր ազգ իւր նիւթական ու բարոյական հարստութիւնների, իւր եռանդի, իւր ճիգերի լաւագոյն մասը ծառայեցնում է այդ հաստատութեան բարգաւաճման ու յառաջադիմութեան գործին։ Քաղաքակիրթ պետութիւնները իրանց բիւդջէի մէկ խոշոր մասը յատկացնում են կրթական գործին, որը հետզհետէ լայն ծաւալ ստանալով՝ լեզաշրջումի ճանապարհի վրայ է դրել այդ երկրների քաղաքական ու տնտեսական կեանքը։ Ընդունելով հանդերձ, որ մի ժողովրդի կրթական մակարդակը համապատասխանում է նրա տընտեսական ու քաղաքական վիճակին՝ պէտք չէ ժխտենք և՛ այն, որ վերջինս էլ իր կողմից հանդիսանում է ազգու մի գործօն հասարակական կեանքի ամեն ասպարէզներում։

Առաջին անդամից թւում է, թէ մենք լաւ ենք ըմբռնում այս և շատ զոհաբերութիւններ ենք անում դպրոցական գործի բարգաւաճման համար։ Բայց, ա՛խ։ Քանի դեռ նոյնիսկ փոքր չափով չենք գիտակցում ուսման, դաստիարակութեան անհրաժեշտութիւնն ու իսկական արժէքը, դեռ մենք շատ հեռու ենք ու պիտի լինինք կրթութեան համար համոզումով աշխատելուց և զոհաբերութիւններ յանձն առնելուց։ Մենք դեռ կրթութիւնը համարում ենք երկրորդական նշանակութիւն ունեցող բան, մի շպար, մի զարդարանք. իսկ եթէ ընդունում ենք նրա անհրաժեշտութիւնը, այդ մենք ըմբռնում ենք շատ դոեհիկ, վուլգար իմաստով—մենք դաստիարակութեան-ուսուցման գործը վերածում ենք լեզուների ու հաշուելու կանոնների իւրացման։ Մենք չենք հասկանում դաստիարակութեան վեհութիւնը, նրա ունեցած մշակող ազդեցութիւնը մտքի, զգացումների և կամքի վրայ։ Բայց, հարկաւ, ազէտ և թիւր հասկացողութիւնները չեն, որ մեզ պիտի առաջնորդեն, այլ դաստիարակչական սկզբունքներն և ժողովրդական կեանքի ծնուած ու ծնուելիք պահանջները։

Այո, եթէ լինէր գիտակից վերաբերմունք հասարակութեան կողմից դէպի դպրոցը, մենք ականատես չէինք լինիլ տխուր և անիմաստ դէպքերի, որոնցով ազքատ չէ մեր դպրոցների վերջին ուսումնական տարուայ պատմութիւնը։ Ցաւելով շեշտում ենք, որ տեղւոյս հասարակութեան կողմից գիտակցական ու սրտացաւ վերաբերմունք դէպի դպրոցը չնկատեցինք։

Ընդհանրապէս ծնողները չեն հետաքրքրւում իրանց երեխաների յառաջադիմութեամբ, երեխան դասերից բացակայում է միանգամայն անմիտ պատճառներով, և ծնողները աչք են փակում այդ երևոյթի հանդէպ։ Ուշադիր չեն ծնողները դէպի իրանց երեխաների բարոյական դաստիարակութիւնը, բարք ու վարքի մշակումը և այլն։ Հետևանք ծնողներ, որ գային դպրոց, հետաքրքրուէին աշակերտների վիճակով, ներկայ լինէին դասերին ու տեսնէին՝ ինչ են ասվորում իրանց երեխաները, ինչն է նրանց թուլութեան պատճառը և այլն և այլն։

Ուրախ պիտի լինէինք, եթէ տեսնէինք, որ ուսումնական-կրթական գործը միանգամայն վոտահացած ու յանձնած լինելով դպրոցի Ուսումնական Վարչութեանը՝ զէթ ընտանեկան դաստիարակութեան գործը իրանք տանում են բաւարար չափով։ Բայց ի՞նչ ծածկենք. ընտանեկան դաստիարակութեան ազդեցութիւն չենք տեսնում ոանների վրայ, այլ բնաւորութեան շատ յոռի կողմեր, որոնց սերմերը տանը ձգւում են, իսկ դպրոցում ծլում։ Դէպի ծնողական ժողովները ցոյց տուած անտարբերը վերաբերմունքը պերճախոս ապացոյց է մեր ասածին։

Ծնողներ, սա ի՞նչ անտարբերութիւն է. ինչու չենք զգում այն ծանր պատասխանատուութիւնը, որը ընկնում է մեզ վրայ։ Մանուկը այն կաւն է, որ յանձնուած է բրուտին. և այդ բրուտները դուք էք՝ ծնողներդ և մենք՝ դաստիարակուսուցիչներս, հարկաւոր է միահամուռ և ներդաշնակ գործունէութիւն։ Որքան կրկնուած ու պարզ է այն ճշմարտութիւնն՝ թէ դպրոցը ու ընտանիքը ձեռք ձեռքի տուած

պիտի գործեն՝ կրթական գործի անթերի յառաջադիմութեան համար. բայց մենք մեկնել ենք ձեռքերնիս, և օդի մէջ մնում է. ծնողական ձեռքը դեռ չենք շօշափել։

Եւ միշտ է եղել այսպէս։ Նախորդ տարիների մի տեղեկագրի ընթերցումը նոյն տխուր իրողութեան պատկերն է ինձ ցոյց տուել։ Հոգանք սրտացաւ կերպով դպրոցական վսեմ գործի մասին, ապա թէ ոչ անկիւններում և մութի մէջ ասածներն ու արուածները—թէ լաւ, թէ վատ—այնտեղ էլ պիտի մնան։

Արդ տեսնենք, այս ու ուրիշ տեսակէտներից աննպաստ պայմաններում ի՞նչ է արուած ներկայ ուսումնական տարում և ի՞նչ պատկեր ունին մեր դպրոցները։

ԴՊՐՈՑՆԵՐ

Ինչպէս յայտնի է, Դպրոցական Վարչութեան՝ Հոգաբարձութեան և Մանկավարժական Խորհրդի խնամքի տակ գտնուում են երեք դպրոցներ և մի մանկապարտէզ՝ Գ. Քանանեան, Ս. Կատարինեան ու Կենտրոնական դպրոցներ և Դ. Քանանեան մանկապարտէզ։ Մանկապարտէզը այս տարի ունեցել է 2 բաժանմունք։ Հոգաբարձութեան և Մնկվ. Խորհրդի որոշմամբ յարմար է դատուել մանկապարտէզի տորին բաժանմունքը փակել. նախ՝ այն պատճառով, որ այդ դասարանում եղած երեխաները շատ փոքր լինելով կարօտ են դեռևս մայրական խնամքի. և երկրորդ՝ հմուտ, մասնագէտ մանկապարտիզպանուհի չունենալու պատճառով։ Գ. Քանանեան դպրոցը ունեցել է Ա. Բ. և Գ. բաժանմունքներ՝ Ա. երկու դասարանում, Բ.՝ 3, Գ.՝ 2 (ընդամենը՝ 7 դուգընթացներով) և Ա. դասարան.

Ս. Կատարինեան դպրոցն ունեցել է Դ. բաժ. և Ա. Բ. Գ. Դ. և Ե. դասարաններ։

Կենտրոնական դպրոցն ունեցել է Բ. Գ. Դ. և Ե. դասարաններ։ Իսկապէս այս դպրոցում գետեղուած Բ. դասարանը պէտք է հաշուել Գ. Քանանեան դպրոցի վրայ՝ ըն-

դունելով վերջինս իբրև երկդասեան:

Դասարանների ընդհանուր թիւն է 20, որից 2-ը մանկապարտէզի բաժանմունքներ:

Բոլոր դասարաններում անցած տարեկան կուրսերը գրուած և ամփոփուած են կիսամեայ ու տարեկան դասընթացների մատեանում:

Թէ ինչ առարկաներ են եղել և որ ուսուցիչներն են առանձնել՝ այդ կը տեսնենք ուսուցչական կազմի մասին խօսելիս:

ՈՒՍՄԱՆ ՇՐՋԱՆ

Դպրոցներում ընդունելութիւնները սկսուել են օգոստ. 17-ից, իսկ դասերը կանոնաւորապէս՝ սեպտ. 1-ից և տևել են մինչև յունիս 10-ը: Բացի Զրօրհնեաց, Զատկի, Բարեկենդանի արձակուրդներից և ազգային ու եկեղեցական տօներից՝ դասեր չեն եղել նաև տեղական սրբոց տօներին, և այս պատճառով իզուր թողնուել են բաւական թուով դասեր: Դպրոցական Վարչութիւնը ուշադրութեան պիտի առնէ այս հանգամանքը և պիտի աշխատէ այդ առիթներով դպրոցը չարձակել. դրա փոխարէն ամրան արձակուրդը պիտի դարձնել երեք ամիս, ինչպէս որ է Հայկական բոլոր դպրոցներում և շատ ուրիշ ազգերի մօտ: Ոչ մի միտք չունի Ամրան աշխատի պարապելու օրերը գոհել և դասերը շարունակել ամրան շոգին, երբ երեխաները շատ նեղւում են և երբէք չեն կարողանում ուշադիր լինել:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Ներկայ ուսումնական տարում դպրոցներում պաշտօնավարել են հետևեալ անձինք:

1. Աբգարեան պ. Ա.

Անգլ. Բ. դաս. օր. 4. Այգերաշ՝ Ե. դաս. -ր 2.
,, Գ. ,, ,, 5. Թուաբ. Գ. ,, ,, 4.
,, Դ. ,, ,, 4. Աշխարհ. Գ. ,, ,, 2.
,, Ե. ,, ,, 5.

Ընդամենը՝ 25 դաս շաբաթական.

2. Աբգարեան պ. Տ.

Հայերէն՝ Գ. բաժ. տղ. 5. Աշխարհագր.՝ Բ. դաս օր. 2.
,, Ա. դաս. տղ. 5.
,, Ա. դաս. օր. 5.
,, Բ. դաս. օր. 5. Ընդամենը՝ 22 դ.

3. Ազանեան Վ. քհնյ.

Անգլ. Բ. բաժ. գ. 4. Կրօն՝ Գ. բաժ. հ. 3.
,, Բ. ,, հ. 4. ,, Ա. դաս. տղ. 3.
,, Գ. բաժ. օր. 3.
,, Ա. դաս. օր. 3.
,, Բ. դաս. օր. 3.
,, Դ. դաս. օր. 3.
Ընդամենը՝ 26 դ.

4. Գալստեան տ. Ծ.

Ա. գ. բաժ. ի բոլոր առարկաները: Ընդամենը՝ 23 դաս.

5. Գալստեան պ. Վ.

Թուաբ.՝ Գ. բաժ. տղ. 4. Աշխարհ՝. Գ. դաս. օր. 2.
,, Ա. դաս ,, 5. ,, Ե. ,, ,, 2.
,, Ա. դաս. օր. 4. Ընդհ. պատմ.՝ Գ. ,, ,, 2.
,, Դ. ,, ,, 2.
,, Ե. ,, տղ. 2.
Ընդամենը՝ 22 դ.

6. Գերասիմեան պ. Ա.

Հայերէն՝ Ե. դաս. օր. 4. Ընդ. պատմ. Գ. դաս. օր. 3.
,, Ե. ,, տղ. 4. ,, Ե. ,, ,, 3.
Խմբերգ՝ 3 դ. Ուսերդ պարապած դասերը-Զայնագր.
Ե. դաս. օր. 2.
Ընդամենը՝ 19 ժամ.

7. Գերասիմեան տ. Ն.

Ընդ. պատմ.՝ Ա. դաս. տղ. 2. Զեռ ու կար՝ Գ. դաս. օր. 2. Իրազնն.՝ Բ. բաժ. տղ. 2.
,, ,, ,, օր. 3. ,, Գ. ,, ,, 2. Գծագր.՝ Բ. ,, օր. 2.
,, Բ. ,, օր. 3. ,, Ե. ,, ,, 2.
,, Գ. ,, օր. 3.
Ընդամենը՝ 21 դ.

8. Դաւթեան պ. Ե.

Հայրենագ.՝ Ա. դաս. տղ. 3. Հայերէն՝ Գ. դաս. օր. 5. Ֆրանս.՝ Գ. դաս. տղ. 3.
,, Ա. ,, օր. 2. ,, Դ. ,, ,, 5. ,, Դ. ,, ,, 3.
Ե. ,, ,, 4.
Ընդամենը՝ 25 դ.

9. Զոհրաբեան օր. Ի.

Անգլ՝. Բ. բաժ. օր. 4. Իրազնն.՝ Բ. բաժ. օր. 2. Հայերէն՝ Գ. բաժ. օր. 5.
Ձեռագ՝. Բ. բաժ. օր. 2.

Անգլ.՝ Գ. բաժ. օր. 4. Իրազնն.՝ Գ. բաժ. տղ. 2. Թուաբ.՝ Բ. բաժ. օր. 5.
Ընդամենը՝ 24 դ.

10. Զոհրաբեան օր. Հ.

Զեռագ.՝ Ա. դաս օր. 4. Գծագր.՝ Ա. դաս. օր. 2.
,, Բ. ,, ,, 4. ,, Բ. դաս. օր. 2.
,, Գ. ,, ,, 2. Գրուքիւն.՝ Բ. բաժ. օր. 2.
,, Դ. ,, ,, 2. ,, Գ. ,, տղ. 2.
,, Ե. ,, ,, 2.
Ընդամենը՝ 22 դ.

11. Խաչիկեան օր. Վ.

Մանկապ. զբ.՝ 12. Իրազնն.՝ Գ. բաժ. օր. 2. Մարմն.՝ Ա. Մնկապ. 1.
Երգ.՝ Ա. դաս. 2. Թուաբ.՝ Գ. բաժ. օր. 4.
Ընդամենը՝ 21 դ.

12. Կարապետեան պ. Մ.

Անգլ.՝ Բ. դաս. տղ. 5. Աբխարհ.՝ Բ. դաս. տղ. 2.
,, Գ. ,, ,, 5. ,, Գ. ,, ,, 2.
,, Դ. ,, ,, 5. ,, Դ. ,, ,, 2.
,, Ե. ,, ,, 5.
Ընդամենը՝ 26 դ.

13. Կիրակոսեան Գ. քհնյ.

Թուաբ.՝ Բ. դաս. տղ. 4. Ալգեբրա՝ Գ. դաս. տղ. 2.
,, Գ. ,, ,, 4. ,, Ե. ,, ,, 2.
,, Դ. ,, ,, 2. Երկրաչ.՝ Ե. ,, ,, 2.
,, Ե. ,, ,, 2.
,, Բ. ,, օր. 4. Ընդամենը՝ 26 դ.
,, Գ. ,, ,, 4.

14. Միրզա Մահմուդ

Գարակերէն՝ Գ. բաժ. տղ. 4.
,, Ա. դաս. ,, 4.
,, Բ. ,, ,, 4.
,, Գ. ,, ,, 4. Ընդամենը՝ 23 դ.
,, Դ. ,, ,, 4.
,, Ե. ,, ,, 3.

15. Յարութիւնեան պ. Ա.

Հայերէն՝ Բ. դաս. տղ. 5. Բն. գիտ.՝ Բ. դաս. տղ. 3. Հայ. պատ.՝ Գ. դաս. տղ. 2.
,, Գ. ,, ,, 5. ,, Գ. ,, ,, 2. Երկր. Զեռագ. Բ. ,, ,, 2.
,, Դ. ,, ,, 5. ,, Դ. ,, ,, 2.
,, Ե. ,, ,, 2.
Ընդամենը՝ 28 դ.

16. Յովհաննիսեան Ես. քհնյ.

Կրօն՝ Բ դաս. տղ. 3. Հայ. պատ.՝ Գ. դաս. տղ. 2. Ընդհ. պատ. Գ. դաս. տղ. 1.
,, Գ. ,, ,, 3. ,, Ե. ,, ,, 2.
,, Դ. ,, ,, 2. ,, Գ. ,, օր. 2.
,, Ե. ,, ,, 2. ,, Դ. ,, ,, 3.
,, Գ. ,, օր. 2. ,, Ե. ,, ,, 3.
,, Ե. ,, ,, 2. Ընդամենը՝ 27 դ.

17. Յոսէփեան օր. Ռ.

Հայերէն՝ Բ. բաժ. հ. 5. Երգ. Բ. բաժ. գ. 2. Գրուքիւն՝ Բ. բաժ օր. 2.
,, Բ. ,, հ. 2. Գծագր.՝ Բ. ,, ,, 2.
Իրազնն.՝ Բ. բաժ. գ. 2. Զեռագ. Բ. ,, գ. 2. ,, Գ. ,, ,, 2.
,, Գ. ,, օր. 2.
Ընդամենը՝ 21 դ.

18. Շուքուրեան պ. Պ.

Հայերէն՝ Բ. բաժ. տղ. 5. Անգլ.՝ Գ. բաժ. տղ. 5. Գծագր.՝ Ա. դաս. տղ. 2.
,, ,, ,, գ. 5. ,, Ա. դաս. տղ. 5.
,, Ա. ,, օր. 4. Ընդամենը՝ 26 դ.

19. Սիմէոնեան օր. Մ.

Գրուք.՝ Բ. դաս. օր. 2. Թուաբ.՝ Բ բաժ. գ. 5. Ընթերց.՝ Բ. դաս. օր. 1.
Մարմն.՝ Բ. բաժ. հ. 2. Գծագր.՝ Գ. ,, տղ. 1. ,, Ա. ,, տղ. 1.
Երգ.՝ Դ. բաժ. տղ. 2. ,, Բ. բաժ. գ. 1.
Մանկապ. 8 ժամ. Ընդամենը՝ 20 դ.

20. Վարդանեան օր. Ծ.

Թուաբ. Բ. բաժ. տղ. 5. Գրուք.՝ Բ. բաժ. տղ. 2. Գրուք.՝ 2. (բ. բ. գ.)
Կրօն.՝ Բ. բաժ. հ. 3. Գծագր.՝ ,, ,, ,, 2. Երգ.՝ Բ. բ. գ. 2.
,, Բ. ,, գ. 3. ,,
,, Գ. ,, գ. 3. Ընդամենը՝ 22 դ.

21. Վարդանեան պ. Մ. (որի փոխարէն առաջին կիսամեակում՝ պ. Պ. Գալստեան)։

Գ. բաժ. գ. ի բոլոր դասերը։ Ընդամենը՝ 28 դ.

22. Տէր-Գրիգորեան օր. Սոֆիա

Ա. Մանկապ.՝ 19 դ. Ընթերց.՝ Ա. դաս. օր. 1.
,, Բ. բաժ. տղ. 1. Ընդամենը՝ 21 դ.

23. Տէր-Մարտիրոսեան օր. Վ.

Ա. բաժ. հ.ի բոլոր դասերը։ Ընդամենը՝ 23 դ.

Ուսումնական տարուայ Ա. կիսամեակի վերջում պ. Պ. Գալստեան հրաժարուելով՝ նրա պաշտօնը յանձնուեց պ. Մ. Վարդանեանին, որը վարել է նաև Հոգեւոր Դպրանոցի

(մեր իրաւասութիւնից դուրս) գիշերօթիկ աշակերտների հսկիչի պաշտօնը։

Ուսումնական տարուայ սկզբին ռոճկի յաւելման պահանջով՝ մի քանի օրով դպրոցը թողել է պ. Վ. Գալստեանը, որը սակայն շուտով համաձայնութեան գալով՝ շարունակել է իւր պաշտօնը։

Օր. Հ. Զոհրաբեանը երկարատև տկարութեան պատճառով ուսումնական տարուայ սկզբից չի պարապել մինչև փետրուար 1-ը։ Այդ միջոցին օրիորդի դասերը աւանդել է իւր քոյր օր. Ն. Զոհրաբեանը։

ՊԱՇՏՕՆՆԵՐ

Ստանձնած լինելով աւագութեան պաշտօնը՝ տեխնիքական հնարաւորութիւն չունէի երեք տարբեր շէնքերում զետեղուած դպրոցների հսկողութիւնը տանել միայնակ, այդ պատճառով Հոգաբարձութեան որոշմամբ տ. Ն. Կերասիմեան նշանակուած է աւագ-ուսուցչի օգնական Ս. Կատարինեան դպրոցում, իսկ պ. Տ. Աբգարեան՝ Քանանեան դպրոցում։

Դպրոցական գրադարանապետի պաշտօնը վարել է Վ. քհնյ. Աղանեան, իսկ դպրոցի տնտեսական մասի հսկողութիւնը յանձնուած է եղել պ. Պ. Շուքուրեանին։

Ամբողջ ուսումնական տարուայ ընթացքում մնկվ. ժողովների քարտուղարութիւնը կատարել է պ. Տ. Աբգարեան։

ԴԱՍՏԻԱՐԱԿԶՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր դասարան ունեցել է իւր դաստիարակը, որի անմիջական պարտականութիւնն է եղել հսկել նոյն դասարանի երեխաների վրայ, ուշադիր լինել նրանց վարքին ու կրթական վիճակին և կատարել դասարանի ցուցակագրութեան, վիճակացոյց կազմելու և այլ ընթացիկ աշխատանքները։

Դաստիարակի պաշտօն կատարել են՝

Գ. Քանանեան դպրոցում՝

Ա. բաժ. հ.	օր. Վ. Տէր-Մարտիրոսեան
» » զ.	տ. Ծ. Գալստեան
Բ. բաժ. օր. (ա)	օր. Ի. Զոհրաբեան
» » » (բ)	օր. Ծ. Վարդանեան
» » տղ.	օր. Ո. Յովսէփեան
Գ. » տղ.	պ. Պ. Շուքուրեան
Գ. » զ.	պ. Մ. Վարդանեան
Ա. դաս. տղ.	պ. Տ. Աբգարեան

Կենտրոնական դպրոցում՝

Բ. դաս. տղ.	օր. Ս. Յարութիւնեան
Գ. » »	օր. Գ. քհնյ. Կիրակոսեան
Դ. » »	պ. Պ. Կարապետեան
Ե. » »	քհնյ. Յովհաննիսեան

Ս. Կատարինեան դպրոցում

Գ. բաժ. օր.	օր. Վ. Խաչիկեան
Դ. դաս. »	պ. Վ. Գալստեան
Բ. »	Վ. քհնյ. Աղանեան
Գ. »	պ. Ս. Աբգարեան
Դ. »	օր. Հ. Զոհրաբեան
Ե. »	տ. Ն. Կերասիմեան։

ՎԵՐՍԿԱՅՈՒԹԻՒՆ

Աշխատարի վերակացութիւնը կատարուել է հերթով՝ Կենտր. դպրոցում՝ օրէցօր, իսկ Գ. Քանանեան ու Ս. Կատարինեան դպրոցներում՝ շաբթէ շաբաթ։ Ի նկատի ունենալով հսկողութեան գործի մէջ եղած որոշ անկարգութիւնները՝ յարմարեցնելու մտքով, որ միաբարոյական իւրաքանչիւր դպրոցում լինի, գոնէ, մէկ մշտական վերակացու, իսկ մարմնուսուցչուհին հերթով օգնեն նրան։

Պէտք է նշենք, որ բացի աշակերտական մարմնական

մանը չարութիւններից՝ մեծ անկարգութիւն, ջարդուածք, անթոյլատրելի, տգեղ արարքներ և այլն տեղի չեն ունեցել՝ շնորհիւ վերակացուների ուշադիր հսկողութեան։

Վերակացութեան պարտականութիւնից ազատ են եղել Ս. քհնյ Յովհաննիսեան՝ Խորհրդարանի գործերով ծանրաբեռնուած լինելու, պ. Ե. Դաւթեան՝ ծերութեան և Վ. քհնյ Աղանեան՝ դպրոցական գրադարանապետութեան պաշտօնը ստանձնած լինելու պատճառով։

ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ԹԻՒԸ

Ներկայ ուսումնական տարուայ սկզբում աշակերտ-աշակերտուհիների թիւը եղել է 523, իսկ վերջում՝ 451։

Ինչպէս դաստիարակների կազմած ստատիստիկան է ցոյց տալիս դպրոց թողնողների մեծագոյն մասի հեռանալու պատճառն այն է, որ նկատել են՝ թէ Վարչութիւնը երբէք մըտադրութիւն չունի իրանց քմահաճոյքներով շարժուելու և պէտք էլ չունի խաթր շահելու։ Այսպէս, դաստիարակների կազմած վիճակագրութեան համաձայն՝ թոշակի պատճառով հեռացած են 27 հոգի։ Դրանք անխտիր ունևոր ծնողների զաւակներ են եղել։ Ուշագրաւ է նաև այն, որ 8 հոգի հեռացել են այն պատճառով, որ չեն ուզել դպրոցական համազգեստ պատրաստել, կամ մազերը սանրել ընդունուած վայելուչ ձևով։ Գիւղ են գնացել 11 հոգի, Հնդկաստան՝ 5։

Կան նաև աշակերտներ, որոնք հեռացել են դպրոցից, որովհետև հակառակ իրանց բուռն ցանկութեան՝ ձրիաբար զգեստ, կամ գիրք չեն ստացել։ 2. որովհետև ծնողների կարծիքով «դպրոցում բան չեն սովորեցնում», կամ բաւական են համարել ունեցած կրթութիւնը։ Միւսները հեռացել են մեզ անյայտ պատճառներով։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ներկայ ուսումնական տարուայ ընթացքում Մանկավ. Խորհուրդը ունեցել է 25 նիստ, որոնց մէջ քննութեան են

առնուել հետևեալ խնդիրները։—

Ընդհանուր դիդաքտիքական ու մեթոդական խնդիրներ, փորձնական դասերի քննութիւն, զանազան առարկաների մեթոդիկայի ու մասնաւոր եղանակների քննութիւն, ծրագրի մշակման ու հաստատման հետ կապուած աշխատանքներ, դիսցիպլինայի խնդիրներ, աշակերտների վարքը։ Համազգեստի, թոշակի, ընդունելութեան, դասարանական նորմերի, հարցաքննութիւնների, սերտողութեան, ծնողական ժողովների, գրաւոր աշխատանքների խնդիրներ և այլ շատ ընթացիկ հարցեր։

Մանկավարժական ժողովը դպրոցների ուսումնական—դաստիարակչական խնդիրներում ունեցել է լիակատար ինքնօրէնութեան իրաւունք։

Եղել է նաև երկու հոգաբարձական և ուսուցչական Խառը ժողով՝ դպրոցի օգտին տրուելիք ներկայացման գործը կարգադրելու համար։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մանկավարժ. ժողովը նկատելով, որ դպրոցները չունին ոչ մի հաստատուն ծրագիր, որով կարելի լինի ղեկավարուել՝ ներկայ ուսումնական տարում երեք պատրաստականի և վեց դասարանի համար մշակեց մի ամբողջական ու մանրամասն ծրագիր, որը արդէն յանձնուած է տպագրութեան։ Հաւատացած ենք, որ յառաջիկայ տարուանից գործադրելով՝ հնարաւոր պիտի լինի աւելի ևս մշակել՝ դաստատուների և ուսումնական գործին ծանօթ այլ անձերի ցուցմունքներից օգտուելով։

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Ի նկատի ունենալով թէ որքան մեծ նշանակութիւն ունին փորձնական դասերը ընդհ. դիդաքտիքական ու մասնաւոր մեթոդական տեսակէտից՝ հնարաւորութիւն տալով որոշակի տեսնելու իւրաքանչիւր դասատուի աւանդ-

ման առաւելութիւններն ու թերութիւնները՝ Մանկվ. ժողովը եկաւ այն համոզման որ անհրաժեշտ է ունենալ փորձնական դասեր գէթ շաբաթէն մէկ անգամ։ Տարւայ ընթացքում, ուսուցիչ-ուսուցչուհիների մեծագոյն մասը փորձնական դասեր է տուել զանազան առարկաներից—հայերէնից, անգլերէնից, թուաբանութիւնից, կրօնից, աշխարհագրութիւնից, բն. պատմութիւնից, իրաւունքից և այլն։ Տրուած փորձնական դասերը քննութեան են առնուել մնկվ. ժողովներում՝ խօսելով դասատուի աւանդման եղանակների, մեթոդական ըմբռնման մասին և լն։ Տրուած փորձնական դասերի թիւն է 18։

Ի նկատի ունենալով, որ մեթոդական տեսակէտից առանձնապէս ուշագրաւ են փոքրերի մօտ եղած դասերը՝ փորձնական դասերի մեծագոյն մասը եղել է պատրաստական դասերում և մանրին դասարաններում։

ԱՐՏԱԿԱՐԳ ԴԱՍԵՐ

Մի քանի վարժուհիների խնդրին ուրախութեամբ համաձայնելով ուսումնական տարւայ ընթացքում տուել եմ մանկավարժութեան դասեր, որոնց ներկայ են եղել օր. օր. Ի. Զոհրաբեան, Ո. Յովսէփեան, Մ. Սիմէոնեան, Ծ. Վարդանեան, Ս. Տէր-Գրիգորեան։ Բացի այս վարժուհիներից ներկայ է եղել նաև օր. Ն. Զոհրաբեանը։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ դպրոցում երբէք ձայնական երաժշտութեան թեորիայի դասեր չեն եղել մայն, որ հիւսերորդ դասարանի աշակերտուհիները շատ փափաք ունին սովորելու, չնայելով դպրոցական փոքր դասականաչափ զբաղուած լինելուս՝ ամբողջ ուսումն. տարւայ ընթացքում շաբաթէն 2 ժամ լրացուցիչ դասարանում եւրոպական ձայնագրութիւն եմ պատրաստել։ Այդ դասերին ներկայ են եղել նաև 4 հոգի վարժուհիներից։ Բ. կիսամեակում նոյն դասարանում շաբաթէն մէկ ժամ պարապել եմ նաև Հայոց նորագոյն գրակ. պատմութիւն։

ՁՊԱՐԱՊԱԾ ԵՒ ԱՒԵԼՈՐԴ ՊԱՐԱՊԱԾ ԴԱՍԵՐ

Ձեռ պարապել՝

օր. Հ. Զոհրաբեան	450	դաս, որից 400ը

պարապել է իւր քոյր օր. Ն. Զոհրաբեանը։ (հիւանդ. պատճ.)

պ. Վ. Գալստեան	154	դաս. (հիւանդ.)
տ. Ծ. Գալստեան	92	»
օր. Մ. Սիմէոնեան	54	»
Միրզա Մահմուդ	40	»
տ. Ն. Գերասիմեան	26	»
Ես. քհնյ Յովհաննիսեան	25	»
օր. Ի. Զոհրաբեան	22	»
պ. Պ. Շուքուրեան	22	»
պ. Մ. Վարդանեան	17	»
օր. Ս. Տէր-Գրիգորեան	16	»
Գ. քհնյ Կիրակոսեան	15	»
օր. Վ. Խաչիկեան	12	»
պ. Ե. Դաւթեան	10	»
պ. Մ. Կարապետեան	10	»
Վ. քհնյ Աղանեան	9	»
օր. Ո. Յովսէփեան	7	»
օր. Ծ. Վարդանեան	6	»
օր. Վ. Տէր-Մարտիրոսեան	5	»
պ. Ա. Գերասիմեան	3	»
պ. Ս. Աբգարեան	2	»
պ. Տ. Աբգարեան	1	»
Գումար	1003	»

Ծանօթ.— Բացակայութեան մեծագոյն մասի պատճառը եղել է հիւանդութիւնը գլխաւորապէս, իսկ երբեմն՝ ընտանեկան զանազան հանգամանքներ։

Աւելորդ դասեր պարապել են՝

պ. Ա. Գերասիմեան	16	դաս
տ. Ն. Գերասիմեան	5	»
պ. Պ. Շուքուրեան	4	»
Գումար	25	»

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Մանկվ. ժողովը քննութեան առնելով աշակերտների յառաջադիմութեան ու վարքի գնահատութեան սովորա-

կան թուանշանական եղանակը և համարելով այդ հակամանկավարժական մի միջոց՝ կիսամեայ ու տարեկան գնահատումների համար որոշեց ի նկատի ունենալ երեք արտայայտութիւն՝ թոյլ, միջակ ու լաւ։ Որոշուեց նաև գնահատել վարքի հետ միասին՝ աշակերտների ջանասիրութիւնն, ուշադրութիւնն ու յիշողութիւնը։ Աշակերտների յառաջադիմութեան պատկերը կարելի է ներկայացնել հետևեալ վիճակագրութեամբ։

Միջին հաշուով
իւրաքանչիւր աշակերտ ունի հետևեալ նիշերը՝

	լաւ	միջակ	թոյլ
Գ. Քանանեան դպրոց			
Ա. բաժ. հիմն.	2	4	2
Ա. » զուգ.	1,5	4	2,5
Բ. » հիմն.	2	3	3
» » զուգ. (ա)	2	3	3
» » » (բ)	3	2,5	2,5
Գ. » հիմն	2	3,5	2,5
» » զուգ.	1	3,5	3,5
Ա. դաս.	2	3,5	3,5
Կենտրոնական դպրոց			
Բ. դաս.	2,5	4,5	1
Գ. »	2	6,8	1,2
Դ. »	1,3	7	2,7
Ե. »	1	7	2
Ս. Կատարինեան դպրոց			
Գ. բաժ.	2,2	4,6	2,2
Ա. դաս.	1	5,5	5,5
Բ. »	4	3	2
Գ. »	2,5	4,5	2
Դ. »	3,8	4,2	2
Ե. »	11	3	0,5

Այս վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ ուժեղագոյն դասարանները եղել են օր. Ե. և Բ. դասարանները, իսկ ամենատկարները՝ տղ. Ե. դասարանը, օր. Ա. դասարանը և Գ. զուգընթաց բաժանմունքը։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

	Դասարանի բաց. ընդհանուր թիւ	Միջին թուով՝ մի աշակերտի
Քանանեան դպրոց		
Ա. բաժ. հիմնական	2754	72
Ա. » զուգընթաց	3920	106
Բ. » հ.	2483	85
Բ. » զ. (ա)	2375	132
Բ. » զ. (բ)	2294	137
Գ. » հ.	2675	96
» » զ.	2421	86
Ա. դաս.	2135	71
Կենտրոնական դպրոց		
Բ. դաս.	869	43
Գ. »	562	51
Դ. »	259	28
Ե. »	769	85
Ս. Կատարինեան դպրոց		
Գ. բաժ.	2213	88
Ա. դաս.	2812	90
Բ. »	237	67
Գ. »	[illegible]	103
Դ. »	199	72
Ե. »	308	44
	32645	81

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI. 1922
Инвент. Наслиник
Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

15997

Այս վիճակագրութիւնից երևում է, թէ որքան շատ են եղել բացակայութիւնները, որոնք և գլխաւոր պատճառներից մէկն են աշակերտների յառաջադիմութեան համեմատական թուլութեան։ Ուշագրաւ է, որ ամենից շատ թոյլեր ունեցող դասարանների բացակայութեան թիւը ամենից շատն է։—Բացակայութեան գլխաւոր պատճառները եղել են հիւանդութիւնն ու վատ եղանակը։ ու Ձիւն ցեխ օրերին պատահել է, որ մանկապարտէզում և նախակրթարաններում բացակայել է աշակերտների մեծագոյն մասը։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ

	Ընդհ. թիւ	Փոխադր.	Մնում են	Վերադրն.	Ընդամենը	% Փոխադր.	% Մնում	% Վերադրն.	% Ընդամ.
Քանանեան դպրոց									
Ա. մանկապ.	36	26	10	—	—	72	28	—	—
Բ. »	31	31	—	—	—	100	—	—	—
Ա. բաժ. Հ.	38	25	7	6	—	65,5	18,5	16	—
Ա. » զ.	37	24	12	—	*1	65	32,5	—	2,5
Բ. բաժ. Հ.	29	17	11	1	—	58,5	38	3,5	—
Բ. » զ. (ա)	18	8	9	1	—	44,5	50	5,5	—
Բ. » զ. (բ)	24	12	9	3	—	50	37,5	12,5	—
Գ. » Հ.	26	17	6	3	—	65,5	23	11,5	—
Գ. » զ.	28	18	10	—	—	65	35	—	—
Ա. դաս.	30	18	10	2	—	60	33	7	—
Կենտրոնական դպր.									
Բ. դաս.	20	13	5	2	—	65	25	10	—
Գ. »	11	8	—	3	—	72,5	—	27,5	—
Դ. »	9	6	2	1	—	67	22	11	—
Ե. »	9	7	2	—	—	78	22	—	—
Ս. Կատարին. դպրոց									
Գ. բաժ.	25	16	8	—	*1	64	32	—	4
Ա. դաս.	30	12	12	5	*1	40	40	17	3
Բ. »	14	10	2	2	—	71,5	14,5	14	—
Գ. »	18	10	6	2	—	55,5	33,5	11	—
Դ. »	11	5	4	2	—	45,5	31,3	18,2	—
Ե. »	70	7	—	—	—	100	—	—	—
	451	290	127	35	*3	64,3	28,2	6,8	0,7

* Հորրորդ տարին նոյն դասարանում մնալու պատճառով։

ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Ջեռուցում։ Ընդհանրապէս դասարանների ջեռուցումը պէտք համարել անբաւարար, որի պատճառներից մէկն է վառելափայտի թանգութիւնը և Ս. Կատարինեան ու Կենտ-

րոնական դպրոցներում դռների ու պատուհանների անյարմար ու հակառողջական շինուածքը։ Այդ կողմից համեմատաբար նախանձելի վիճակ ունին Քանանեան դպրոցի դասարանները։ Վատ են ջեռուցւում Ս. Կատարինեան ու Կենտրոնական դպրոցների այն դասարանները, որոնք նայում են դէպի հիւսիս։ Այս հանգամանքի վրայ ուշադրութիւն պիտի դարձնէ դպրոցական Վարչութիւնը։

Լուսաւորութիւնը։ Քանանեան դպրոցի լուսաւորութիւնը միանգամայն գոհացուցիչ է։ Լոյսը սեղանների վրայ սփռւում է ձախ կողմից (աշակերտների նստած դիրքից), առատութեամբ և սեղանների բարձրութեամբ վերևից։ Այս կողմից աննախանձելի վիճակի մէջ են դարձեալ Կենտրոնական ու Ս. Կատարինեան դպրոցների հիւսիս նայող պատուհաններով դասարանները։ Ս. Կատարինեան ու Կենտր. դպրոցների պատուհանները թէ ջեռուցման, թէ լուսաւորութեան տեսակէտից անպէտք են և կարօտ վերանորոգութեան։

Գ. Քանանեան եւ Ս. Կատարինեան դպրոցների գրասեղան-նստարանները թէպէտ չունին առողջապահական բոլոր անհրաժեշտ յարմարութիւնները, որ նախատեսուած են դպրոցական առողջապահութեան մէջ, բայց ունին այնքան յարմարութիւններ, որ գոնէ պատճառ չեն դառնալ ողնաշարային ծռումների և տեսողութեան թուլութեան։ Կենտրոնականի և Ս. Կատարինեան դպրոցի դասարաններից մի մասի սեղան-նստարանները միայն իբրև վառելափայտ կարող են պէտք գալ։ Անհրաժեշտ է շինել տալ մի քանի դասարանների համար նոր գրասեղան-նստարաններ։

Քարտէզների եւ աշխարհագրական այլ պարագաների մեծ պակասութիւն կայ։ Հինգ մայր ցամաքների քաղաքական քարտէզները արդէն շատ մաշուած են ու անպէտքացած։ Միանգամայն բացակայում են ֆիզիք. աշխարհագրութեան և պատմական քարտէզներ, որոնք շատ անհրաժեշտ են դպրոցի համար և պիտի բերել տրուին անպայման։ Դպրոցում կայ նաև մի տելլուրիյ և երկու գլոբուս։

Պակասում են նաև ֆիզիքական աշխարհագրութիւնը անցնելու համար անհրաժեշտ պարզաբանող նկարներ։

Բնագիտական առարկաների աւանդման համար անհրաժեշտ նիւթերի մեծ կարիք կայ։ Դպրոցում կայ միայն մի միկրոսկոպ, (որը մասամբ փչացած է և կարիք ունի վերանորոգութեան) և բնապատմական նկարներ որոշ չափով։ Ֆիզի՛այի ու քիմիայի դասաւանդման համար անհրաժեշտ նիւթերից ու պարագաներից դպրոցները միանգամայն զուրկ են։

Դոհացուցիչ պէտք է համարել մանկապարտէզի նիւթերի ու խաղալիկների քանակութիւնը, բայց սրանց մի մասն էլ գործածութիւնից փչացած լինելով՝ պէտք կայ նոր նիւթերի գնման։

Պակասում են նաև թուաբանութիւն, երկրաչափութիւն, իրաւունութիւն անցնելու համար անհրաժեշտ շատ պարագաներ ու իրեր։ Այս պատճառով՝ հակառակ Մանկ. ժողովի ցանկութիւններին՝ շատ առարկաներ դպրոցում աւանդուել են միայն տեսականօրէն։ Այս հանգամանքն առանձնապէս ուշադրաւ պիտի լինի, որովհետև մանկավարժութեան տարրական սկզբունքներին համաձայն՝ ուսուցումը միշտ սկսելու է առարկայականից-կոնկրետից և ապա անցնելու է վերացականին-աբստրակտին։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆ

Մանկավարժ. ժողովը նկատելով՝ թէ աշակերտներից և թէ ծնողներից ոմանց անթոյլատրելիօրէն ազատ վերաբերմունքը դէպի դպրոցական կարգ ու կանոնն և որոշումները՝ վճռել է աննկուն կերպով հետևել, որ այդպիսիները վարժուեն յարգել դիսցիպլինան և քմահաճոյքով չվերաբերուեն դպրոցական կարգերին։ Դպրոցների ամբողջ տարուայ պատմութիւնը լիքն է ծիծաղելի և միևնոյն ժամանակ ցաւալի միջադէպերով։ Օր.՝ մէկ ծնող թոյլ է տալիս իրան դասարան մտնել և հայհոյել աշակերտների

ներկայութեամբ այն վարժուհուն, որը յորդորած է եղել նրա աղջկան՝ մազերը մաքուր սանրել։ Մի ուրիշ ծնող հրահանգում է ուսուցիչներից մէկին, որ դասարանում բարձրաձայն չխօսէ, որովհետև իր երեխան կարող է վախենալ։ Մի ուրիշը խրատներ է կարդում և սովորեցնում ուսուցիչներին, որ «ուսումը մազերի ու զգեստի մէջ չէ, այլ գլխի», հետևաբար ուսուցիչները աւելորդ նեղութիւն չը կրեն յորդորներ կարդալու, թէ ինչպէս պիտի հագնուել, սանրուել և այլն։ Եւ այսպիսի վերաբերմունքի մի ամբողջ շարան։ Թողնում ենք մի կողմ այն, թէ ծնողները որքան յարգանքով են վերաբերուում դէպի ուսուցիչները՝ իրանց զաւակների ներկայութեամբ նրանց մասին արտայատուելիս։ Մեզ համար դպրոցական դիսցիպլինան պէտք է միշտ բարձր լինի, և անոյշք պիտի լինինք դէպի զանցառութիւնները։ Մենք երբէք խնդրելով—աղաչելով աշակերտներ ժողովելու պէտք չունինք և, մանաւանդ, երբէք փափագ չունինք նրանց անմիտ քմահաճոյքներով ղեկավարելու։

ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ԲԱՐԵԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Քանիցս մանկ. ժողովներում խորհրդակցութեան նիւթ է դարձել աշակերտների բարեկրթութեան խնդիրը։ Շատ նկատելի են աշակերտների թերութիւնները այդ տեսակէտից՝ չգիտեն շնորհքով բարևել, իրանց ազատ ու վայելուչ պահել, ունին կոպիտ ձևեր և չնայած յաճախակի հրահանգներին ու տրուած կենդանի օրինակներին՝ և շնորհիւ այն հանգամանքի, որ այդ թերութիւնը միջավայրի անկուլտուրականութեան հետևանքն է— այդ կողմից աշակերտների մէջ կատարուած փոփոխութիւնը շատ աննշան է։ Այս հանգամանքի վրայ էլ յարգելի ծնողների բարեհաճ ուշադրութիւնն ենք հրաւիրում։

ՊԱՏԻԺՆԵՐ

Մանկվ. ժողովը դեմ լինելով միանգամայն մարմնական

ու ճնշիչ պատիժներին՝ խորհրդակցութիւններ ունենալով յանգել է այն եզրակացութեան, որ պատիժների մէջ միակ յանձնարարելիներն են քարոյական ու բնական պատիժները։ Պէտք է ձգտել աշակերտի մէջ զարգացնել մաքուր ինքնասիրութեան ոգի այն չափով, որ նա ուսուցչի թեթև մի հայեացքից, կամ նկատողութիւնից զգայ իւր սխալը կամ յանցանքը։ Պատիժը պէտք է լինի նաև բնական. աշակերտը իւր կատարած վատ արարքի յոռի հետևանքը անձամբ պիտի կրէ իւր վրայ։ Անանձնապէս անկարգ ու յանդուգն երեխաների հետ պիտի վարուել աւելի խիստ, բայց այս վերաբերմունքը երբէք նուաստացնող բնոյթ չպիտի ունենայ ու թշնամական չպիտի լինի։ Աչք ծակող չափով փչացած ու անպիտանացած աշակերտներ չեն եղել, և շատ խիստ պատիժների դիմելու կարիք էլ չի զգացուել սոյն տարուայ ընթացքում։

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Մանկ. ժողովը ի նկատի ունենալով, որ երեկոյեան դասերից յետոյ եղած սերտողութիւնը միանգամայն աննպատակայարմար ու վնասակար է, որովհետև աշակերտները այդ միջոցին շատ յոգնած են լինում և միւս օրուայ գրքերն էլ հետները չեն ունենում՝ որոշեց վերացնել երեկոյեան սերտողութեան դասերը և դրանց փոխարէն Կենտրոնական դպրոցում միշտ ու Ս. Կատարինեան դպրոցում ապրիլի 1-ից սկսած՝ ունենալ առաւօտեան սերտողութեան դասեր։ Այդ ժամերին աշակերտները թարմ են լինում և օրուայ համար անհրաժեշտ գրքերը պատրաստ ունենալով՝ կարճատև կրկնողութեամբ հնարաւորութիւն են ունենում թարմացնելու պատրաստած դասերը։ Սերտողութեան ժամերին հսկել են հերթական վերակացուները։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Շնորհիւ աշակերտների դասերով ծանրաբեռնուած լինելուն՝ միայն մի քանի դասարաններում ունեցել ենք պարբերական ընթերցանութեան դասեր։ Այդ պակասը մասամբ լրացնելու համար՝ յանձնարարուել է հայերէնի ու կրօնագիտ. դասատուներին անցած նիւթի շուրջը ունենալ գրուցատրութիւն՝ վերլուծելով նիւթը, տիպերը որոշելով ևն։ Իւրաքանչիւր դասարանից, ի նկատի ունենալով, թէ որքան մեծ նշանակութիւն ունի ընտիր գործերի ազատ ընթերցանութիւնը աշակերտների մտաւոր ու բարոյական զարգացման տեսակէտից՝ Մանկ. ժողովի որոշմամբ դպրոցական գրադարանի գրքերից ընտրութեամբ բաժանուած են դասարանների վրայ և յանձնուած դասատարակներին, որոնք բաժանել են աշակերտներին ու ղեկավարել ընթերցանութեան գործը։ Այս գործը՝ իր լրջութեան շնորհիւ, կարիք ունի աւելի նպատակայարմար ու սիստեմատիք կազմակերպութեան։

Աշակերտութիւնը պարտաճանաչ է գտնուել, և Աշակերտական Միութիւնը գրադարանի համար բերել է տուել մօտ 150 կտոր գիրք։ — Եղած գրքերի մի մասի կազմերը քքքրուած լինելով՝ Աշակ. Միութեան դրամից 10 թուման յատկացուած է կազմահան եղած գրքերը նորոգել տալուն։

ՁԱՅՆԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾԻԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դպրոցներս այս տարի էլ ունեցել են երգեցիկ ու նուագող խմբեր։ Երգեցիկ խումբը, որ կազմուած է շուրջ 90 աշակերտ-աշակերտուհիներից, ուսումնական տարուայ ընթացքում՝ Ա. Գերասիմեանի ղեկավարութեամբ երգել է Ս. Ամենափրկչեան Վանքի Մայր Եկեղեցում կիւրակէ և տօն օրերին, այլ և թաղային եկեղեցիներում տեղական սրբոց տօներին։ Խումբը երգել է Եկմալեանի քառաձայն խառն խմբի համար պատրաստած վարիանտով։ Երգել է նաև դպրոցական հանդէսներին զանազան աշխարհիկ երգեր՝ քառաձայն, եռաձայն, դուէտ և այլն։

Փողաւոր նուագարանների խումբը պ. Մ. Կարապետեանի ղեկավարութեամբ նուագել է զանազան պարսկական ու եւրոպական կտորներ հանդէսներին ու ներկայացումներին։

Ուրախալի է, որ գործիական երաժշտութիւնն էլ սկսում է աշակերտներին գրաւել. կան աշակերտներ էլ, որոնք սկսել են սովորել ջութակ։ Այսպէս շարունակուելով, յուսով ենք, որ մօտիկ ապագայում դպրոցի օրկեստրը աւելի ևս կ'ուժեղանայ ու կը կատարելագործէ իւր նուագը։

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Սոյն ուսումնական տարում Ս. Կատարինեան դպրոցի բարձրագոյն դասարանների աշակերտուհիները մի գրութեամբ դիմել էին Մնկվ. Ժողովին, խնդրելով թոյլատրել կազմելու աշակերտական մի միութիւն, որը առաջադրած ունէր հետևեալ նպատակները՝ 1. պարապել ինքնազարգացմամբ. 2. Նպաստել դպրոցական գրադարանի ու ֆիզիք. կաբինետի ճոխացմանը. 3. Նիւթական օժանդակութիւն հասցնել իրանց չքաւոր ընկեր-ուհիներին։ Մնկվ. Ժողովը լիակատար համակրանքով վերաբերուեց այս խնդրին՝ գտնելով որ դա միջոց կը տայ աշակերտների ինքնագործութեան զարգացմանը և հասարակական զգացումը մշակելով նրանց մէջ՝ կը նպաստէ ընդհանրական կեանքի համար նախապատրաստուելուն։ Ի նկատի ունենալով, որ աշակերտներին ղեկավարելու համար անհրաժեշտ է մէկ հմուտ ձեռք՝ Աշակերտական Միութեան ղեկավարութեան գործը յանձնուեց տ. Ն. Գերասիմեանին, որը և՝ ղեկավարեց ամբողջ տարին։

Պէտք է ասել, որ Միութեան գոյութիւնն ու գործունէութիւնը նկատելի կերպով ազդել է աշակերտների բարքերի ու բնաւորութեան վրայ և երբէք արգելք չէ հանդիսացել դասերը սովորելուն ու ջանասիրութեանը։

Տարուայ ընթացքում Աշ. Միութիւնը կազմակերպել է մի կոնցերտ-ներկայացում, որը անցել է շատ յաջող։ Ներկայացումից ստացուել է 70 թուման արդիւնք, որի մի մասը յատկացուել է դպրոցական գրադարանի համար գրքեր բերելուն և կազմահան եղած գրքերը կազմել տալուն։ Միութիւնը իւր համար մշակել է մի ներքին կանոնագիր, որը հաստատուած է Մնկվ. Ժողովի կողմից։ Ունեցել են նաև

դասախօսութիւններ. խօսել է տ. Ն. Գերասիմեան աշակերտներին մատչելի նիւթերի շուրջը. խօսել են նաև իրանք աշակերտները։ Եղել են դիսկուսիաներ ղեկավարի հսկողութեամբ։

Յուսով ենք, որ Աշ. Միութիւնը իր ներքուն և տակուն աշխատանքով այսուհետև պիտի կարողանայ մի օգտակար հաստատութիւն լինել մեր աշակերտութեան միօրինակ կեանքի մէջ։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Սոյն ուսումնական տարուայ ընթացքում դպրոցներիս Վարչութեան և աշակերտների կողմից կազմակերպուել է 2 ներկայացում և 4 հանդէս։ 1. Ուսուցչական խմբի նախաձեռնութեամբ և յօգուտ դպրոցի խաղացուել է «Եւգինէ» պիէսան և եղել է կոնցերտ։ 2. Աշակերտական միութեան նախաձեռնութեամբ և յօգուտ դպրոցական գրադարանի խաղացուել է «Դասդարի ամի» պիէսան և եղել է կոնցերտ։ 3. Տարեմուտի երեկոյին եղել է դպրոցական հանդէս ու ներկայացում։ 4. Ս. Կատարինեան դպրոցի հիմնադիր Մ. Յորդանանեանի տօնի առթիւ հանդէս։ 5. Թեմական Առաջնորդ Գերապատիւ Ս. Արքեպ. Այվատեանի տօնի առթիւ շնորհաւորական հանդէս և 6. դպրոցական տարեվերջի ակտի հանդէս։

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Սոյն ուսումնական տարուայ ընթացքում Մանկավարժական Ժողովի հրաւէրով գումարուել են երեք ծնողական ժողովներ։ Խօսել է Աւագ-ուսուցիչը՝ առաջին անգամ՝ բարոյական դաստիարակութեան մասին, երկրորդ անգամ՝ ընտանիքի ու դպրոցի դաստիակչական դերի մասին, երրորդ անգամ՝ համագգեստի, թոշակի, օտար դպրոցների ընթացքի ու բացակայութեանց մասին։ Սակայն մենք չտեսանք ծնողների կողմից ջերմագին վերաբերմունք դէպի իրանց զաւակների դաստիարակչական-կրթական խնդիրները։ Ժո-

ղովներին քիչ ծնողներ էին ներկայ լինում, իսկ ներկայ եղողներն էլ՝ հակառակ մեր յորդորներին՝ երբէք առաջադրած հարցերի մասին չեն ցանկացել խօսել, բացատրութիւն ուզել և վիճել։ Լոկ խօսքերով չէ, որ մենք ուզում ենք մեղադրել ծնողներին. փաստերը ամեն ինչ պերճախօս կերպով են ցուցադրում։ Սակայն չնայած այս բոլորին՝ առաջիկայ տարում աւելի մեծ տեղ է տրուելու ծնողական ժողովներին, և ցանկալի է, որ ծնողները իրանց որևէ դժգոհութիւնը, կամ ասելիքը ուղղակի արտայայտէին ժողովում։

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԱ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹՈՒԻ ՈՒ ՏԱՐԻՔԻ

Որպէսզի դասարանները չներկայացնեն ամեն հասակի և ուզած թուով աշակերտների խայտաղէտ մի հաւաքածու. Մանկավարժական ժողովը յարմար գտաւ հետևեալ նորման որոշել

ա) Ոչ մի դասարանում աշակերտների թիւը 35-ից աւելի չպիտի լինի։

բ) Իւրաքանչիւր դասարանում ընդունուող աշակերտի տարիքի նուազագոյն և առաւելագոյն չափը որոշուեց։

Այս նկատուելով հարկադրուած ենք եղել բաւական թուով և եխա ելի մեժել. չընդունել մանկապարտէզում, որովհետև որոշուած նուազագոյն չափից (5 տարեկան) աւելի փոքր են եղել։ Եղել են դէպքեր նաև, որ պատրաստականների բազմամարդութեան պատճառով՝ նոր աշակերտներ ստիպուած ենք եղել չընդունել։

ՇԱԲԱԹ ՕՐԸ

Համոզուած լինելով, որ միանգամայն անօգուտ է ստորին դասարանների աշակերտներին արձակել շաբաթ օրերը՝ Մնկվ. ժողովը՝ յարգելի չհամարելով բաղանիք գնալու և Մէյդանից անցնելու պատճառաբանութիւնները՝ որոշեց դասեր ունենալ շաբաթ օրերն էլ՝ բացառութեամբ մանկապարտէզի։ Բայց հակառակ դասատուների պատուէրներին ու յորդորներին՝ շատ երեխաներ շարունակել են յաճախակի բացակայել շաբաթ օրերը։ Ընդհ. բացակայութեան մէկ նշանաւոր մասը շաբաթ օրուայ բաց թողած դասերինն է։ Այս հանգամանքի վրայ չենք կարող չհրաւիրել ծնողների լուրջ ուշադրութիւնը։ Սա էլ մէկ ընդհանուր փաստ է, որ կան ծնողներ, որոնք միանգամայն անտարբեր են դէպի իրանց երեխաների կրթութեան գործը։

ԳՐԱՒՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Խիստ նկատելի էր ամբողջ դպրոցում, որ աշակերտներն ընդհանրապէս գրաւոր աշխատանքներ շատ քիչ ունենալով՝ միանգամայն տհաս են իրանց մտքերը գրաւոր արտայայտելու մէջ։ այս պակասը լրացնելու և ընդհ. մանկավարժական նկատումներով՝ առանձին ուշադրութիւն ենք դարձրել գրաւոր աշխատանքների վրայ. յաճախակի շարադրութիւններ տալով՝ ոչ միայն լեզուի առարկաներից, այլ նաև ուրիշ՝ ինչպէս պատմութիւնից, աշխարհագրութիւնից, պատմութիւնից և այլն։ Այս ուղղութեամբ արած մեր քայլերը մասամբ միայն տուել են ցանկալի արդիւնքը՝ առաջ ն փորձը լինելու պատճառով։

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Մարմնամարզութեան ու ընտիր խաղերի նշանակութիւնը ակնյայտ է երեխաների թէ ֆիզիկական և թէ հոգեկան կրթութեան տեսակէտից։ Շատ հին առած է՝ «առողջ հոգին առողջ մարմնի մէջ»։

Խաղերի համար մեծ յարմարութիւն են ներկայացնում Կենտր. և Քանանեան դպրոցների բակերը, իսկ Ս. Կատարինեան դպրոցի բակը նեղ է և խաղալու համար անյարմար։ Ուսուցիչները խիստ զբաղուած լինելու և մարզագէտ ուսուցչի չգոյութեան պատճառով՝ երեխաները չեն ունեցել սիստեմատիկ խաղեր, իսկ մարմնամարզութեան դասեր եղել են միայն ստորին դասարաններում։ Կենտրոնական դպրոցի ա-

շակերտներին խաղալ չի տրուել եղած մարմնամարզական ապարատներով որոնք այժմ մանկավարժական ու առողջապահական տեսակէտից համարուում են ոչ-յանձնարարելի, որովհետև ոչ թէ երեխայի մկանային ամբողջ սիստեմ են մարզում, այլ միայն նրա մասերը՝ ի վնաս միւսների։ Բացի դրանից այդ խաղերը կապուած են մեծ ֆիզիքական վնասումների, ջարդուածքների հետ և այլն։

Դպրոցական Վարչութիւնը ի նկատի պիտի առնէ այս հանգամանքը և լուրջ ուշադրութիւն պիտի դարձնէ ֆիզիքական դաստիարակութեան վրայ՝ մտցնելով մարմնամարզութեան դասեր և կազմակերպուած խաղեր։ Նոր կազմած ծրագրի մէջ նախատեսելով այդ հանգամանքը՝ մտցրել ենք ընդհանուր մարմնամարզութեան յատուկ դասեր։

ՀԱՄԱԶԳԵՍՏ

Մանկավարժական ժողովը ի նկատի ունենալով թէ որքան անհրաժեշտ է աշակերտների համար համազգեստը, մանաւանդ այսպիսի մի չքաւոր վայրում, ուր աշակերտութեան մեծ մասը հագնուում է անկանոն, անմաքուր և խայտաբղէտ՝ որոշեց թէ մանկապարտէզում, թէ երեք դպրոցների աշակերտների ու աշակերտուհիների համար համազգեստի յատուկ ձևեր՝ որոշ գոյներով — դարչնագոյն՝ աղջիկների համար, մոխրագոյն՝ տղաների և ցանցաւոր գոգնոցներ՝ մանկապարտէզի երեխաների համար։ Զնայած այն հանգամանքին, որ թէ դաստիարակներն են այդ մասին յաճախ պատուիրել դասարաններում և թէ ես առիթ եմ ունեցել ծնողական ժողովում խօսելու համազգեստի նշանակութեան ու անհրաժեշտութեան մասին, այնուամենայնիւ տղաների մէջ որոշ թիւ մինչև այսօր էլ համազգեստ չունի։ Աղջիկների մէջ շատ քիչ են համազգեստ չունեցողները։ Ամենից աւելի շնորհքով և միանման հագնուել են 5րդ դասարանի աշակերտուհիները, որոնց համազգեստի համար որոշուած է եղել տարբեր գոյն և գոգնոցի յատուկ ձև։ Ծնողները շատ անհոգ են դէպի մանկապարտէզի մանր

երեխաները, որոնց մեծ մասը մինչև վերջն էլ դպրոց է եկել անկարգ ու այլազան հագնուած՝ չնայած վարժուհիների յաճախակի պատուէրներին։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ

Պէտք է ասած, որ նախանձելի վիճակ չունին մեր աշակերտները մաքրութեան կողմից՝ մանաւանդ փոքրերը։ Շատ երեխաներ հագնուում են պատառոտուած. կան երեխաներ, որոնք դպրոց են գալիս առանց գուլպայի, մազերը չսանրած, երեսն ու ձեռները չլուացած։ Քանի անգամ ուսուցիչներն ու դաստիարակները այդ բանի վերաբերմամբ դիտողութիւններ են արել, բայց անմաքրասիրութեան ախտը հնարաւորութիւն չենք ունեցել արմատախիլ անելու։ Սխալ է կարծել, թէ չքաւորութեան անխուսափելի հետևանքն է անմաքրութիւնը։ Կան չքաւոր ընտանիքներ, որոնց երեխաները հագնում են թէև հին, կարկատած, բայց մաքուր։ Ուշադրաւ է այն, որ եղել են ծնողներ, որոնք հայհոյել և լուտանքներ են թափել այն ուսուցիչների գլխին, որոնք յորդորել են աշակերտներին ուշք դարձնել մաքրութեան վերայ։

ԹՈՇԱԿԻ ԽՆԴԻՐ

Հոգաբարձութեան որոշման համաձայն, ինչպէս յայտնի է, այս տարուանից դպրոցներում հաստատուած է թոշակի դրութիւնը։ Առաջին անգամ լինելով՝ թոշակի գումարը շատ չնչին է որոշուած՝ 6-36 դրամ՝ դասարանների համեմատ. բացի դրանից, ի նկատի ունենալով ապգաբնակութեան նիւթական նեղ վիճակը դպրոցի աշակերտներից մօտ 280-ը ընդունուած են ձրիաբար և առաջին քառամսեան վճարելու համար տրուած է 5-6 ամիս ժամանակ։ Ծնողական ժողովում թէպէտ այդ մասին խօսուել է, բայց ոնուամենայնիւ եղել են մարդիկ, որոնք ոչ միայն հակառակ դիրք են բռնել, այլև ամեն տեղ սկսել են խօսել՝ համոզելով, որ թոշակ չպիտի վճարել, դպրոցները թոշակի պէտք չունին, ապա-

հով են և ուրիշ այս կարգի աւելորդ ու մտացածին խօսքեր։ Ցաւում ենք, որ այն պարզ ճշմարտութիւնը՝ թէ ուսնեւորները անպատճառ սիտի վճարեն ուսման վարձ՝ դեռ ևս այստեղ պէտք կայ ոմանց համար պարզաբանելու։

Դպրոցներիս Վարչութիւնը վճռել է անշեղ գնալ այս ուղղութեամբ։ Մարդիկ, որ պատրաստ են մի քանի ղռանի համար իրանց երեխաներին մի դպրոցից միւսը քաշ տալ, մի ազդեցութիւնից միւսին ենթարկել, գալիս են իբրև կենդանի ապացոյց ծառայելու՝ թէ ինչպէս կան ծնողներ, որոնք կատարելապէս անփոյթ են վերաբերւում դէպի իրանց զաւակների կրթութեան գործը։ Հակառակ այն բանին, որ մենք դպրոց բարեհաճող մի քանի ծնողների հետ երկար խօսակցութիւն ունենալով՝ աշխատեցինք համոզել նրանց որ պատճառ չդառնան իրանց զաւակների կրթութեան ընթացքի խանգարման, շեշտելով մանաւանդ. որ Գ. Քանանեան դպրոցի բարերարուհի յարգելի տ. Վ. Քանանեանն էլ համակիր է այդ որոշմանը, այնուամենայնիւ գտնուեցան ծնողներ, որոնք իրանց երեխաներին դուրս տարան դպրոցից և տեղաւորեցին տեղւոյս բողոքականների ու կաթոլիկների դպրոցներում։

ՕՏԱՐ ԴՊՐՈՑՆԵՐ

Հոկտեմբեր ամսին կաթոլիկաց դպրոցից մէկ աշակերտ մեր դպրոցը գալով՝ նախ քան ընդունելը պաշտօնական գրութեամբ դիմեցինք կաթոլիկաց դպրոցի տնօրէնին՝ հարցնելով իրանց դպրոցը թողած աշակերտի մասին՝ արդեօք դպրոցից արձակուած է, թէ ոչ։ Բայց այդ նամակի պատասխանը չստացանք։ Միւս կողմից, վերջերս էլ թոշակի պատճառով, կամ նոյնիսկ միանգամայն անմիտ պատճառներով մեր դպրոցից հեռացած աշակերտները թէ բողոքականաց, և թէ կաթոլիկների դպրոցներում գրկաբաց ընդունուեցան։ Այդ դպրոցների յարգելի վարչութիւնները, եթէ գիտեն յարգել դպրոցական սկզբունքներն ու էթիկան, այդպէս չպէտք է վարուէին։ Բայց մենք չունինք հիմքեր՝ համոզուած լինելու, որ նոքա այդ գիտակցութիւնն ունին։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանկ. ծողովը զբաղուելով քննութիւնների խնդրով՝ եկաւ այն եզրակացութեան, որ ձևական քննութիւնները միանգամայն մերժելի են, որովհետև նրանց գլխաւոր նպատակներին— անցած կուրսի կրկնողութիւն և աշխատանքի կոնտրոլ — կարելի է հասնել նաև առանց ձևական քննութիւնների. իսկ որպէսզի բացի աւագից՝ նաև ուրիշ ուսուցիչներ էլ հնարաւորութիւն ունենան ծանօթանալու՝ թէ ինչ չափով են անցել որևէ առարկայ, որոշուեց ունենալ դասարանական հարցաքննութիւններ այն առարկաներից, որոնք վերջանում են այս կամ այն դասարանում։

Եղան հետևեալ դասարանական հարցաքննութիւնները.

Իրաւունքութիւն՝	Գ. բաժ. հ.	օր.	Ի. Զոհրաբեան
»	» » զ.	պ.	Մ. Վարդանեան
»	Գ. բաժ օր.	օր.	Վ. Խաչիկեան
Հայրենագիտ.	Ա. դաս. տղ.	պ.	Ե. Դաւթեան
»	Ա. » օր.	»	» »
Երկրաչ. ձևագ.	Բ. դաս. տղ.	պ.	Ա. Ցարութիւնեան
Աշխարհագր.	Դ. դաս օր.	պ.	Վ. Գալստեան
»	Դ. » տղ.	պ.	Մ. Կարապետեան
Հայ. պատմ.	Ե. » տղ.	Եպ.	քհնյ. Յովհաննիսեան
» »	Ե. դաս. օր.	Եպ.	քհնյ. Յովհաննիսեան
Կրօնագիտ.	Դ. » »	»	» »
»	Դ. » տղ.	»	» »
Բնակ. պատմ.	Ե. » օր.	պ.	Ա. Գնրասիմեան
» »	Ե. » տղ.	պ.	Ա. Ցարութիւնեան
Եկեղեց. պատմ.	Ե. դաս. օր.	Եպ.	քհնյ. Յովհաննիսեան
» »	Ե. » տղ.	»	» »
Թուաբան.	Ե. » տղ.	Գ.	քհնյ. Կիրակոսեան
Ալգեբրա	Ե. » օր.	պ.	Ս. Աբգարեան

Միւս կողմից, որպէսզի դպրոցը հնարաւորութիւն տայ ծնողներին և առհասարակ դպրոցական գործով հետաքրքրուող անհատներին ծանօթանալու դպրոցների աշակերտների վիճակին— յատուկ յայտարարութեամբ հրաւիրեց ներկայ լինել դասերին, բայց այս դէպքում էլ մեր հասարակու-

թիւնը ցոյց տուեց իւր դատապարտելի անտարբերութիւնը դէպի իրանց զաւակների կրթական վիճակը։

Բայի Սրբազան Առաջնորդից ու հոգաբարձուներից՝ դպրոց յաճախել են դաս լսելու միայն 4 օրիորդներ և մի օտար վայրից եկած ու դպրոցական գործով հետաքրքրուող պարոն։

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Աշակերտուհիների առողջական վիճակը քննելու նեղութիւնը յանձն է առել Ազգային հիւանդանոցի բժշկապետ մեծարգոյ Դր. Մ. Ռանդոլֆ, որին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը իւր պատրաստակամ և ուշադիր վերաբերմունքի համար։

Համաձայն յարգելի բժշկի տուած գրաւոր տեղեկութիւններին՝ աշակերտութեան առողջական ընդհանուր վիճակը պէտք է համարել ոչ անբաւարար. թէպէտ աշակերտութեան մեծամասնութեան սննդառութիւնը գոհացուցիչ չէ, բայց շնորհիւ տեղւոյս կլիմայական պայմաններին ու ջրին, դրանից մեծ չափով չէ տուժում երեխաների առողջութիւնը։ Աշակերտների անմաքրութեան մասին յարգելի բժիշկն էլ շեշտում է իւր տուած տեղեկութիւնների մէջ. այլև մատնանշում է այն հանգամանքը, որ շատ ծնողներ չեն թողնում, որ իրանց զաւակները հիւանդութիւնից յետոյ լաւ կազդուրուին և ապա բժշկից վկայական առնելով շարունակեն դպրոց յաճախել։ Ուսուցիչները ընդհանրապէս ուշադիր են եղել դէպի այս հանգամանքը. բայց եղել են դէպքեր, որ երեխաները կատարելապէս առողջացածի երեւոյթով դասարան են եկել։ Բաւականաչափ աշակերտներ կան, որոնք գլխի վերք ունին և որոնց խնամելը յանձն է առել յարգելի բժիշկը։ Աշակերտութեան մի մասին, որին անհրաժեշտ է համարել, յարգելի բժիշկը տուել է նաև առողջապահական պատուէրներ։

Յիշենք այստեղ նաև այն, որ ամեն տարուայ նման, այս տարի էլ 50-60 չքաւոր աշակերտ-աշակերտուհիների ձրիաբար ճաշ է տրուել (տաք կերակուր)։

ԴԱՍԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ԽՆԴԻՐ

Թէ Հոգաբարձական և թէ Մանկավարժական ժողովներում խառը, երկու սեռի սաներով դասարանների խնդիրը քննութիւն առնուելով՝ դպրոցներիս Վարչութիւնը եկել է այն եզրակացութեան, որ խառը ուսուցումը, որը արդէն վաղուց կիրառւում է շատ տեղերում և օրէցօր մեծ ծաւալ ստանում, նպատակայարմար է գործադրել հետևեալ նկատումներով։ Նախ՝ 5-10-15 աշակերտներով առանձին առանձին դասարաններ պահելու և ծախսեր անելու փոխարէն՝ լաւագոյն է մէկ դասարան կազմել և միասին պարապել, այսպիսով դպրոցը իւր ծախսերի մէջ տնտեսութիւն անելով՝ հնարաւորութիւն կ'ունենայ աւելի բարեկարգուելու ու բարձրանալու։ Երկրորդ՝ խառը ուսուցումը ունի բարերար և ուղղիչ ներգործութիւն երկու սեռի սաների բարքերի ու յառաջադիմութեան վրայ։ Բայց քանի որ մինչև այժմ առանձին-առանձին ընթացած լինելու պատճառով տղայոց և աղջկանց դասարանների անցած կուրսերի մէջ աչքի ընկնող տարբերութիւններ կան, Վարչութիւնս ի նկատի ունի առաջիկայ տարում միացնել միայն այն դասերը, որոնք կարելի է զուգընթաց անցնել՝ առանց կուրսի խանգարման։

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դպրոցական Վարչութիւնը մտածել է առաջիկայ ուսումնական տարում բանալ 6րդ դասարան։ Այս հանգամանքը նշանակալից է, որովհետև այսպիսով մեր աշակերտուհիները հնարաւորութիւն կունենան մասամբ լրացած ու ամբողջական պաշարով դուրս գալ դպրոցից։ Որպէսզի աշակերտները 6-րդ դասարանը աւարտելով՝ կարողանան ազատ գրել ու կարդալ անգլերէն, ծրագրում նախատեսուած է բարձր դասարաններում Անգլիայի պատմութիւնը, Անգլիայի և Հնդկաստանի աշխարհագրութիւնը, քիմիան, տոմարակալութիւնը, ալգեբրան ու երկրաչափութիւնը անցնել անգլերէն լեզուով։ Ի նկատի ունենալով նաև, որ գիւ-

ղերում մեծ կարիք կայ փոքր ի շատէ պատրաստուած ուսուցիչների և որ, Ազգային դպրոցները գլխաւորապէս պիտի գոհացնեն այդ կարիքը, ծրագրում նախատեսուած է նաև անցնել մանկավարժութիւն։

Ահա այն պատկերը, որ ներկայացնում են մեր դպրոցները սոյն ուսումնական տարում։ Այստեղ որոշակի ցուցադրուած են այն յոռի ու աննպաստ պայմանները թէ հասարակական, թէ ուսումնարանական տեսակէտից, որոնցում գործել է ներկայ ուսուցչական կազմը։ Այստեղ նաև մասամբ ուրուագծուած են այն սկզբունքները, որոնցով մենք ղեկավարուել ենք և այն բոլոր քայլերը, որ մենք արել ենք։ Յաւակնութիւն չունինք կարծելու, թէ շատ բան ենք արել ու անթերի ենք եղել։ Երբէք։ Միայն հաստատ համոզումն ունինք, որ արել ենք այն, ինչ որ տուեալ պայմաններում կաւելի էր և կարող էինք. չենք խնայել ամեն կարգի աշխատանք ու ճիգ ուսումնարանական վեհ գործին լաւագոյն ծառայած լինելու համար։

Ի վերջոյ, խորին շնորհակալութիւնս եմ յայտնում դպրոցներիս պատուաւոր Հոգաբարձութեան և իւր Գերապատիւ Նախագահին, որոնք ամեն կերպով օժանդակել և տուել են իրանց վստահութիւնը մեր ձեռնարկների հանդէպ։ Նաև խորին շնորհակալութիւնս իմ յարգելի պաշտօնակից բոլոր ուսուցիչ—ուսուցչուհիներին, որոնք ջանասիրութեամբ և սիրով աշխատեցին ամենքիս սիրած դպրոցների նուիրական գործում։

Աւագ-ուսուցիչ Ազգային դպրոցների՝
Ա. ԳԵՐԱՍԻՄԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԱՍՆ ԱՄՍՈՒԱՑ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Ազգային Կենտրոնական, Ս. Կատարինեան և Գէորգ-Քանանեան երկսեռ դպրոցների Հոգաբարձութիւնը անցեալ 1910 թ. Օգոս. 1-ին ստանձնելով իւր պաշտօնը, ստացաւ իւր նախորդից դպրոցների ընդհանուր հաշիւների հետ միասին 257,250 ղուանի տոկոսաբեր մուրհակներ և 9937 ղ. կանխիկ դրամ, իսկ 24,541 ղ. պարտք։

Հոգաբարձութիւնը իւր տասն ամսուայ պաշտօնավարութեան ընթացքում ունեցել է 29 նիստ, ուր զբաղուել է հետևեալ հարցերով։—

Ա. Հրաւիրել է պարոն և տիկին Գերասիմեաններին, որոնք ուսումնական տարուայ սկզբից շարունակել են իրենց ուսուցչութեան պաշտօնները, միաժամանակ վարել են առաջինը ընդհանուր դպրոցների աւագ-ուսուցչի պաշտօնը և երկրորդը իբրև աւագ-ուսուցչի օգնական օրիորդաց դպրոցում. իսկ Գ. Քանանեան դպրոցում աւագ-ուսուցչի օգնականի պաշտօնը վարել է պ. Տիգրան Աբգարեանը։

Բ. Հոգաբարձութիւնը դպրոցների բացը մասամբ ծածկելու նպատակաւ՝ հաստատեց թոշակի դրութիւնը, իհարկէ միայն կարողաւոր ծնողների զաւակների համար. 500 երկսեռ աշակերտներից վճարողներ են եղել միայն 210 հոգի, որոնցից ստացուել է մօտ 2000 ղ. և յոյս ունի որ յառաջիկայում վճարողների թիւը կաւելանայ։

Ուսուցիչ ուսուցչուհիների մասնակցութեամբ դպրոցների օգտին տրուած, ներկայացումից ստացուել է մօտ 900 ղ. զուտ արդիւնք։

Գ. Հոգաբարձութիւնը կուսանաց Մենաստանի գորգագործարանի Վարչութեան հետ միասին ձեռնարկած է

վիճակահանութիւն, որից դպրոցներին զուտ արդիւնք է սպասւում 12,000 դրամ։

Դ. Հոգաբարձութիւնը ի նկատի ունենալով, որ դպրոցների արհեստագիտական ճիւղից խառատանոցն իւր նպատակին չէ ծառայած և իւր բացուելու օրից ոչ մի աշակերտ չէ ցանկացել այնտեղ ատաղձագործութիւն սովորել և որ ամսական առնուազը 20 թուման վնաս էր բերում, որոշեց փակել այդ ճիւղը և դրա փոխարէն դերձականոց բանալ։

Զուլհականոցի համար որոշել է մի հմուտ վարպետ բերել տալ Եազդից, որը կարողանայ բամբակէ կտորների հետ և մետաքսեայ գործել, այս մասին բանակցութիւնների մէջ է։

Գալով Երկաթագործարանին իր ճոխ գործիքները ունենալով հանդերձ՝ վարպետ չունենալու պատճառաւ փակ է մնացել։ Հոգաբարձութիւնը միշտ աշխատել է մի հմուտ վարպետ (Սիլէսար) գտնել և այդ առթիւ դիմումներ է արել արտասահման։

Կօշկակարանոցի անցեալ տարիներից անվաճառ մնացած կօշիկները վիճակախաղի դնելով՝ յաջողուեց դրամի վերածել։

Ե. Հոգաբարձութեանս Գերապատիւ Նախագահն անցեալ տարուայ աշնան տեղեկանալով, որ Ջելալդովլէն վաճառելու է «Փէրիայ» դաւառում երեք հայաբնակ՝ «Սանգիբարան» «Խօյգան» «Բոլորան» գիւղերը, փութաց անմիջապէս Գերամեծար Եղբարք Թումանեանց առևտրական տան միջոցաւ և նրանց աջակցութեամբ և օժանդակութեամբ գնել վերոյիշեալ գիւղերը նպատակաւ որ՝ նոյն գիւղերի հողագործների իւրաքանչիւրին իր վարելահողը գնել տալու։ Ուրախալի է, որ Սանգիբարանի և Խօյգանի գիւղացիները ըմբռնելով բարեպատեհ առիթը, իւրաքանչիւրն իր վարելահողը գնեց. իսկ Բոլորանի հողագործները այլ և այլ պատ-

ճառներով չտրամադրուեցին միւս գիւղերի հողագործների օրինակին հետևելու։

Հոգաբարձութիւնը ժամանակին յայտնեց Յարգելի տիկին Վառվառէ Քանանեանին, որ համաձայնի Գէորգ Քանանեան դպրոցի դրամագլխից մի մասը վերցնել գիւղը գնելու. միևնոյն ժամանակ տեղեկացնելով յարգելի Տիկնոջը, որ տարէց-տարի տեղիս Կայսերական բանկի տոկոսները իջնում են, ինչպէս անցեալներում Գ. Քանանեան դպրոցի դրամագլխի 1500 թուման տոկոսը 1250 թումանի է իջած, հետևաբար Գ. Քանանեան դրամագլխի տոկոսը չի համապատասխանում Գ Քանանեան երկդասեան դպրոցի և մանկապարտէզի ծախսերին, չնայելով որ Հոգաբարձութիւնս մտադիր է մի հմուտ մանկապարտեզպանուհի ևս ունենալ, որպէսզի Քանանեան դպրոցի մանկապատէզի դաստիարակութեան գործն աւելի լաւ և արդիւնաւոր հիման վրայ դնի։ Բայց յարգելի Տիկնոջից նպաստաւոր պատասխան չստանալով՝ Հոգաբարձութիւն մի խորհրդակցական ժողով ունեցաւ տեղիս եօթը թաղերի Սրժ. քահանաների, թաղապետների և բարեգործական հաստատութիւնների մարմինների հետ. ուրտեղ միաձայն որոշուեց գնել «Բոլորան» գիւղը Կենտրոնական և Ս. Կատարինեան երկսեռ դպրոցների համար։

Հոգաբարձութիւնը Բոլորան գիւղը գնելու համար աչքի առաջ ունեցաւ հետևեալ գումարները։—

ա. Թէհրանի Գերամեծար Եղբարց Թումանեանց առևտրականում ապահովուած 14,910 դրանը, բ. Իսպահանայ Կասերական Բանկում 5250 դրանը և գ. Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի յօբելեանի առթիւ հանգանակուած Կալկաթայում 8000 ռուփին. նոյն նպատակաւ շնորհակալութեամբ ստացուել է իբրև նուէր յարգելի Դոկտ. Ռանդօլֆից մի հազար դրանն։

Զ. Հոգաբարձութիւնը որոշել է առաջիկայ ուսումնական տարեսկզբից բանալ դպրոցներում Զ-րդ դասարան, դրա

համար արդէն մի նոր ուսուցիչ ևս հրաւիրել է. բացի այս մի ուրիշ ուսուցչի և մի հմուտ մանկապարտէզպանուհու կարիք ևս կայ, որոնց համար աշխատումէ։

Է. Հոգաբարձութիւնը դպրոցների համար ծրագրի անհրաժեշտութիւնը նկատի ունենալով, ժամանակին պատուիրեց Աւագ ուսուցիչ պ. Ա. Գերասիմեանին պատրաստել մի ծրագիր, որը արդէն կազմուած լինելով յանձնուած է Հոգաբարձութեան կողմից տպագրութեան։

Ը. Դպրոցական Զիգան գիւղի անցեալ տարուայ եկամուտը գոհացուցիչ լինելուց հեռու է, դրա պատճառն այն է, որ Արժ. Եզնիկ վարդապետը՝ առանց նախորդ և այժմեան Հոգաբարձութեան արտօնութեան, դպրոցներին պատկանող 40 խալվար (2000 լիտր) ցորէնը վաճառել էր գիւղացիներին։ Հոգաբարձութիւնը գրաւոր կերպով դիմեց Եզնիկ վարդապետին, բայց ցարդ գոհացուցիչ պատասխան չէ ստացել։

Հոգաբարձութիւնը դպրոցների մասին ներկայ ընդհանուր տեղեկութիւնները տալով՝ յարգոյ հասարակութեան, պարտք է համարում իր շնորհակալութիւնը յայտնել բարեսէր և ուսումնասէր ազգայիներին, որոնք իրենց բարոյական և դրամական օժանդակութեամբ քաջալերած են, յոյս ունի որ այսուհետև կվայելէ թէ Զուղայի և թէ արտասահմանի ազգայինների համակրանքը, որով պիտի արդիւնաւորուեն մեր դպրոցները. յայտնում է նոյնպէս իւր շնորհակալութիւնը պարոն և տիկին Գերասիմեաններին և բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներին, որոնք բարեխղճութեամբ կատարած են իրենց պարտականութիւնները։

Հոգաբարձութիւնը իւր խորին շնորհակալութիւնը յայտնում է Բաթաւիոյ Ազգ. Վարչութեան, որ ինչպէս անցեալներում այս տարի ևս բարեհաճեց 1200 գիլդը նուէր փոխանցել դպրոցների օգտին։

Հոգաբարձութիւնը ի վերջոյ չպիտի մոռանայ հրապարակաւ յայտնելու իր խորին շնորհակալութիւնը, նաև Մեծապատիւ պարոն Սէթ Պալին, որն իւր բարեկամների հետ միասին համաձայն իւր խոստման՝ սկսել է շարունակել դպրոցների օգտին տարեկան 200 Անգլիական ոսկի նուէրը։

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԻՒՂԵՐԻ

1910—1911 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՑ

Հաշիւ Եր-և-մտից Ազգային Երկսեռ Ուսումնարանաց, Օգոստոս, 1910 մինչև Յուլիս 1911

ՄՈՒՏՔ

	Դրամ	Սնք.	Դրամ	Սնք.
Նախ. գանձապահից ստացուած			6233	50
Ստաց. Նուէր պ. Գրիգոր Արգարեանէն	25			
» Ս. Յովհ. Եկեղեցւոյ պանդոկի երկու տարուան արդիւնքը	400			
» Մեծպ. պ. Սէթ Պողոսեանի տարեկան պաունդ 200 նպաստը	10725			
» Մեծպ. պ. պ. Ստեփաննոս Պողոս և Ընկերութեան պաունդ նպաստը 19-20 . . .	1012	30		
» Բատաւիոյ Հայ Ազգ. Հաստատութեանց Պատուարժան Վարչութեան 3 թերթ փոխանակագիր պաունդ 270, 18, 1 արժողու.	14511	20		
» Հանգ. տ. Բարսան Տէր Սարգսեանի կտակած այդւոյ վարձը	120			
» Ի հաշիւ Զիգան գիւղի արդիւնքի	3683			
» Հանգ. Գրիգոր Գասպարեանի տան և այդւոյ վարձ . .	480			
» Կայս. բանքից 7250 ղոնի տոկոսը	439	75		
» » » 5250 » » 6 ամիսուան 3% .	78	75		
» Կալկաթայից Ս. Կատ. օր. անձեռնամխելի 8000 ռուփ. դրամագլխի տոկոսը ռուփի 263 .	936	30		
» Ս. Մինաս Եկեղ. 1910 էն նպաստը	1500			
» Ս. Յովհ. Եկեղ. » »	500			
» Հանգ. Գէորգ Քանանեանի 25000 թմն. դրամագլխի տոկոսը Կայս. բանքից	12500			
» Ամսաթոշակներից . . .	2087	35		
» Մանկական երեկոյթի արդիւնքից	200			
» Թատրոնի արդիւնքից . .	906	75	50105	40
Փոխադրելի			56338	90

ԵԼՔ

	Դրամ	Սնք.	Դրամ	Սնք.
Հեռագրի ծախս . . .			127	60
Ուսուցիչ և վարժուհիների ռոճիկներ մինչև Յուլիս վերջ			40880	
Ծառայից վարձ » » »			2760	
Մանկական գրադարանի համար գիրք կազմելու վարձ . .			16	
Վասն նորոգութեանց . . .			594	
» Մանր ծախուց . . .			912	75
» Ճանապարհածախսի պ. Արմենակ Գերասիմեանի .			400	
» Զիգան գիւղի Եկեղեցու տաճար նկարելու . .			270	
Հանգ. տիկին Բ. Տէր Սարգսեանի կտակած այդւոյ ծախսը .			204	10
» Գ. Գասպարեանի այդւոյ պատի ծախքի կէս մասը . .			147	55
1500 թուականի տոկոս Հայուհեաց Բարեգ. Ընկերութեան և Ազգային Հիւանդանոցին			1200	
Գետնահարկի			8	
Կուսանաց Մենաստանի տարեկան գետնավարձը			500	
Վառելիքի			1834	20
Կահկարասեաց			194	50
Փոստի ծախուց			16	85
Մանկական երեկոյթի ծախուց .			189	30
Թատրոնի ծախուց . . .			47	85
Զիգան գիւղի Սարքաղի մալիաթը .			230	
» » Ցորենի տարբերութիւնը			128	80
» » Սարքարի վարձը . .			60	
» » Մալիաթը . . .			885	50
Փոխարինաբ. գիւղա. Կրթ. Խորհուրդին	683			
» Գորգագործարանին .	500			
» Ս. Գէորգ և Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիներին . .	2200		3383	
Փոխադրելի			54990	

ՄՈՒՏՔ

	Ղրան	Սնք.	Ղրան	Սնք.
Փոխադրուած			56338	90
Վերստացեալ պ. Մ Եդդարեանի պաունդ 100 դուսարն Կայսերական բանքից վան գիւղ գնելու . .	5250			
Ստացեալ Դր Ռանդոլֆից նպաստ վան գիւղ գնելու . . .	1000			
Վերստացեալ Մեծպ. Եղբարք Թումանեանց մօտ պահեստի գումարներն ընդ տոկոսաւ վան գիւղ գնելու .	15655	55	21905	55
Մեծպ. Եղբարք Թումանեանց պահանջը			1400	
Վեհ. Շահի տարեկան նպաստը դպրոցներին			1000	
Գումարն է			80644	45

Ծանօթ. ա. Ուսումնարաններս ունէին առ մին Յունվարի 1911 ամի ի խնամս Ս. Յովհ. Եկեղ. հայոց Բաթաւիոյ.

Կենդրոնականն գիւղը	10300—
Ս. Կատարինէ օրիորդացն	7400—

բ. ի խնամս Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ հայոց Սինգափուրայ մառչիլք 757—50

գ. Իսպահանի Կայսերական Բանքում Գէորգ Քանանեան դպրոցի և Մանկապարտէզի դրամագլուխ . . . զրան 250,000—

Հանգ. տիկին Սարրա Աղանեանի կտակածը 1000—

» Տէր Իսահակ Թ. Ամբարչեանի յիշատակին ապահոված գումարը 1000—

ԵԼՔ

	Ղրան	Սնք.	Ղրան	Սնք.
Փոխադրուած			54990	
Դպրոցների և Գործագործարանի վիճակախաղի համար եղած ծախք			470	05
Ի հաշիւ գնման Բոլորան գիւղի			21905	55
Պատրաստի գումար 30 Յունիս 1911			3278	85
Գումարն է			80644	45

դ. Մակասարի Մեծապ. Միքայէլ Ստեփաննոս և Ընկ. վաճառատանը Հանգ. Աւետիք Ն. Կրէտեանի կտակած գումարը Գիլդր 6507—70

Պարտք մնացած անցեալ տարուց

Հայոց հեաց Բարեգործական Ընկերութեան (տոկոսով)	ղր. 10000—
Հոգևոր Դպրանոցին	» 2000—
Հանգ. Ց. Պողոսեանեանի Ցանձնախմբին (տոկոսով)	» 5000—
Ս. Կաթ. Օր. Դպրոցի անձեռնմխելի դրամագլխին	» 7541—90
	զրան 24541—90

Հաշիւ Եր-և-մտից Ազգային Արհեստագիտական

ՄՈՒՏՔ

	Ղուան	Սնբ.	Ղուան	Սնբ.
Նախ. գանձապահից ստացուած			3724	
Պատրաստի քիչ, նիւթեղէն և ապառիկ Ջուհլականոցում . .	4770	45		
Կանխավճար, կոչիկ, կաշեղէն, նիւթեղէն և ապառիկ Կոչիկարանոցում	8017	55	12788	
Խառատանոցի 7 ամսուան մուտքն	1546			
Կոչիկարանոցի 11 » »	10663	65		
Ջուհլականոցի 9 » »	6347	45	18557	10
Ստացեալ Կալկաթայի Մեծապատ. պրնչք Աբգարեանց Նպաստը 2 անգամին ռուփիք 1241-10 Աֆիշիէլ տբբասից			4445	
Ստացեալ Սինկափուռուց պրնչք Ստեփաննոս Պողոս և Ընկերութեան միջոցաւ Լուս. Եկեղ. պաունդ 6 Նպաստը պրնչք Եսայի Սարգսեանների ձեռամբ			318	
Գումարն է			39832	10

Դպրոցների, Օգոստոս, 1910 մինչև Յունիս 1911։

ԵԼՔ

	Ղուան	Սնբ.	Ղուան	Սնբ.
Խառատանոցի հաշիւ				
Վճարեալ վասն Նիւթեղինեաց	134	35		
» » փայտի .	696	25		
Վարպետի և աշակերտների վարձ	1307	20		
Վճարեալ վասն գործիքների	100		2237	80
Կոշկակարանոցի հաշիւ				
1909—1910 տարուանից պատրաստի կոշիկ փոխադրեալ ի հաշիւ	1484			
Նիւթեղէնք . . .	1856	55		
Ապառիկներ . . .	1307			
Կաշեղինեաց կանխավճար .	3370			
10 ամսուայ վարպետի և աշակերտի վարձ	3750			
Գնած կաշիների արժէք .	4089	80		
Նիւթեղէններ . .	1087	30		
Գործիքներ . . .	441			
Վառելիքի և մանր ծախք .	116	65		
Կահ-կարասիք . . .	102		17604	30
Ջուհլականոցի հաշիւ				
1909—1910 տարուանից պատրաստի 956½ դեղ քիչ փոխադրեալ ի հաշիւ	2708			
Գումար	953	35		
Ապառիկներ . . .	902	10		
Նիւթեղէններ . . .	207			
Դերձանի . . .	6176	25		
Գործիքների . . .	15			
Շինութեանց . . .	398	60		
Վարպետի և աշակերտների վարձ	2212	25		
Մանր ծախք . . .	233	40	13805	95
Երկաթագործարանի հաշիւ				
Վճարեալ 7 սանդուղ մեքենաների ճանապարհածախսի մնացորդն			92	20
Պատրաստի դրամ 30 Յունիս 1911			6091	85
Գումարն է			39832	10

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Армянская Библиотека
ИМЯНИ А. МАСИНЯНА
ԱՅԱՎ. ԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

Հաստատում ենք Հոգաբարձական տեղեկագիրն ու հաշիւները։

Նախագահ Հոգաբարձ. Սահակ Արքեպիսկոպոս Այվատեան

Գանձապահ՝ Արամ Գ. Յովսէփեան

Անդամներ՝
- Կարապետ քհնյ. Թումիկեան
- Դոկտոր Մ. Ռանդոլֆ
- Թադէոս Ն. Տէր-Գալստանեան
- Ալէքսան Աբրահամեան
- Յովհաննէս Ղարախանեան
- Մարտիրոս Աբգարեան

20089

2013

<< Ազգային գրադարան

NL0053550